ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Ստելլա Մկրտչյան
ՀՀ ֆինանսների նախարարության պետական պարտքի կառավարման վարչության գործառնական բաժնի գլխավոր մասնագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ք. Փարիզ, Ֆրանսիայի Հանրապետություն, 2024թ. հոկտեմբերի 13-ից 18-ը ներառյալ

3. Հրավիրող կողմը.

Զարգացման ֆրանսիական գործակալություն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Հնարավորություն ընձեռել ձեռք բերել գործնական գիտելիքներ՝ մասնակցելով Զարգացման ֆրանսիական գործակալության կողմից կազմակերպված «Կլիմայի խնդիրների ինտեգրումը և հանրային ֆինանսների ու ֆինանսական հատվածի կառավարման հզորացումը Հայաստանում» թեմայով ուսումնական այցին

5. Քննարկված թեմաները

<u>ա/ Կանաչ բյուջեի կազման գործընթաց և հաշվետվության կառուցվածք,</u>
<u>բ/ Կանաչ պարտատոմսերի թողարկումների կառուցվածք և կառավարում,</u>
<u>գ/ Պետական և մասնավոր ներդրողների կողմից ֆինանսավորվող կանաչ ծրագրերը:</u>

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Այցելության ընթացքում տեղի են ունեցել հանդիպումներ Զարգացման ֆրանսիական գործակալության, Ֆրանսիայի ֆինանսների նախարարության Կանաչ բյուջեի աշխատանքային խմբի, էկոլոգիական պլանավորման գլխավոր քարտուղարության, Ֆինանսական գլխավոր տեսչության, Ազգային աուդիտորական դատարանի, Կլիմայի տնտեսագիտության ինստիտուտի, Ֆրանսիայի գանձապետարանի և «Պատասխանատու ֆինանսական դերակատարներ» ասոցիացիայի ներկայացուցիչների հետ: Ներկայացվել և քննարկվել են Ֆրանսիայի փորձը կանաչ բյուջեի և կանաչ ֆինանսների ոլորտում. թե ինչպես է Ֆրանսիան ինտեգրել բնապահպանական չափանիշները պետական բյուջեի մշակման և կատարման մեջ, Ֆրանսիայում կանաչ բյուջեի ընդունման հիմքում ընկած գործընթացները, մեթոդաբանությունները և օրենսդրական շրջանակները, ներառյալ պետական ծախսերի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը,

հաշվետվության մեխանիզմները, որոնք օգտագործվում են Ֆրանսիայում՝ ապահովելու բնապահպանական ծախսերի թափանցիկությունն ու արդյունավետությունը: Ներկայացվել է նաև կանաչ պարտատոմսերի թողարկման ֆրանսիական փորձը, ներառյալ կարգավորող շրջանակի ձևավորումը, կանաչ նախագծերի ընտրությունը, պետական և մասնավոր ներդրողների ներգրավածությունը կանաչ ծրագրերֆինանսավորման մեջ՝ հիմնված հարկաբյուջետային և կարգավորիչ խթանների վրա, կանաչ պարտատոմսերի հետ կապված հաշվետվությունների և աուդիտի գործընթացները, ինչպես նաև շրջակա միջավայրի վրա մեծ ազդեցություն ունեցող նախագծերի համար միջոցների օգտագործումը:

Միաժամանակ քննարկվել են Հայաստանում կանաչ բյուջեի կիրառման և կանաչ պարտատոմսերի թողարկման հնարավորությունները, ՀՖԳ-ի կողմից տարբեր երկրներին ցուցաբերվող տեխնիկական աջակցությունը տվյալ ոլորտներում:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Այցի ընթացքում որոշումների ընդունում կամ փաստաթղթի ստորագրում չի իրականացվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այցելության ընթացքում ֆրանսիական կողմի ներկայացված փորձը և քննարկված թեմաները հնարավորություն են տալիս գնահատել ապագայում Հայաստանում կիրառելու հնարավորությունը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

23 հոկտեմբերի 2024թ.